

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 36/1

27 հունիսի 2017թ.

Քննարկվեց «ԱՎԻԱԿՈՄՊԱՆԻԱ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ գանգատն ավելացված արժեքի հարկի և պետական տուրքի գծով լրացուցիչ պարտավորությունների առաջացման դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 15.03.2017թ. N 1221036 հանձնարարագրի համաձայն ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմինն վերապահված իրավասության սահմաններում «ԱՎԻԱԿՈՄՊԱՆԻԱ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) կատարվել է ուսումնասիրություն՝ արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, պատրաստի արտադրանքի, ապրանքների պակասորդի, ինչպես նաև իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում՝ միջին) չափագրման իրականացման նպատակով: Արդյունքում 30.03.2017թ. կազմվել է չափագրման արդյունքների վերաբերյալ N 1221036 արձանագրությունը: Չափագրման ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ 30.03.2017թ. կազմվել է նաև տեղեկանք, որում մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

«ԱՎԻԱԿՈՄՊԱՆԻԱ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ն հանդիսանում է ավիափոխադրումներ, ուղևորափոխադրումներ և բեռնափոխադրումներ իրականացնող ընկերություն: Ընկերությունը սեփականության իրավունքով իրեն պատկանող շարժական և անշարժ գույք չունի: Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է հիմնականում երկու վարձակալված ինքնաթիռներով:

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ Ընկերությունը «Ձորջիան Էյրվեյզ» ՓԲԸ-ի հետ կնքված ASMI պայմանագրերի շրջանակներում վերջինիս վարձակալությամբ տրամադրում է ինքնաթիռներ, որոնց վարձակալության վճարների մասով («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ և 14-րդ հոդվածներ) չի հաշվարկում և չի վճարում ԱԱՀ, ընդհանուր գումարով 212.5 մլն ՀՀ դրամ՝ 2016թ. հունիսից մինչև 2017թ. փետրվարն ընկած ժամանակահատվածների համար:

Միաժամանակ, Ընկերության կողմից իրակացված ուղևորափոխադրումների վերաբերյալ ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված տեղեկությունների, ինչպես նաև Ընկերությունում առկա փաստաթղթերի համդրումից պարզվել է, որ 2016թ. հուլիսի 1-ից մինչև 2017թ. փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում պակաս է հաշվարկել ՀՀ տարածքից փաստացի մեկնած ուղևորների մասով պետական տուրքի գումարները 7.3 մլն ՀՀ դրամի չափով:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ընկերության գանգատը քննության է առնվել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.05.2017թ. տեղի ունեցած նիստի ընթացքում: Բարձրացված հարցերի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացվելու համար Ընկերության ներկայացուցիչներին առաջակվել է ներկայացնել Ընկերության և

«Զորջիան Էյրվեյգ» ՓԲԸ-ի հետ կնքված ASMI պայմանագրերի օրինակները: Ընկերության կողմից Հանձնաժողով է ներկայացվել նշված պայմանագրի անգլերեն տարբերակը: Այնուհետև, Ընկերության կողմից պատրաստակամություն է հայտնվել ներկայացնել նաև պայմանագրի հայերեն թարգմանված տարբերակը, սակայն մինչ օրս այն չի ներկայացվել:

Միննույն ժամանակ, ՀՀ կառավարության և Վրաստանի գործադիր իշխանության միջև ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) արտահանման և ներմուծման ժամանակ անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին Համաձայնագրի շրջանակներում բարձրացված հարցերի վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցում է կատարվել Վրաստանի Հանրապետության եկամուտների ծառայություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման՝ մինչև կատարված հարցման վերաբերյալ պատասխան ստանալը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«ԱՎԻԱԿՈՄՊԱՆԻԱ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ